

RESEARCH OF COMMUNICATIVE TYPES OF A SENTENCE IN ORIGINAL AND TRANSLATED TEXTS

*A. Zh. Martirosyan
G. F. Bdeyan*

The most significant issue for a coherent text is that of pronunciation. Since pronunciation is a complex phenomenon, structures invariably linked to it are highlighted in the research work. It is obvious that an interrogative sentence is characterized by a pronunciation different from that of an affirmative one. In this terms a considerable number of non concurrences between the original and translated texts is observed. The translators have substituted the simple affirmative sentences (dominant in the text by Tumanyan) for complex interrogative ones, thus essentially modifying the fluent flow of the idea intonation peculiar for a quatrain.

ՏԱՌԱԳՐԱԿԱՆ ԱՆՀԱՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Մ. ԳՅՈՒՐԶԱՅԱՆՑ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Լեզուների տառագրական համակարգերը, լեզվական այլ համակարգերի նման, կարող են դառնալ զուգադրական ուսումնասիրության առարկա: Չնայած անգլերենի և հայերենի տառագրական համակարգերը տարբեր այբուբեններ են կիրառում (անգլերենը լատիներեն այբուբենն է օգտագործում, իսկ հայերենը՝ իր ուրույն այբուբենը), դրանք նույնպես հնարավոր է վերլուծել զուգադրական տեսանկյունից, քանի որ ինչպես անգլերենի, այնպես էլ հայերենի տառագրական համակարգերի հիմքում ընկած է նույն սկզբունքը՝ հարաբերակցությունը տառի և հնչյունի միջև:

Վ. Գ. Գալը նշում է, որ իդեալական այբուբենում այդ հարաբերակցությունը փոխադարձ-միանշանակ է, այսինքն մեկ տառին համապատասխանում է մեկ հնչյուն, մեկ հնչյունին՝ մեկ տառ: Սակայն, իրականում, այս իդեալական հարաբերակցությունը լեզուներում չի հանդիպում մի շարք պատճառներով: Նախ և առաջ, այբուբեն ստեղծելիս հնարավոր չէ հաշվի առնել խոսքում իրականացվող հնչյուսի բոլոր տարբերակները: Բացի այդ, լեզվի պատմական զարգացման ընթացքում տառ-հնչյուս հարաբերակցությունը զգալի փոփոխությունների է ենթարկվում: Քանի որ այս հարաբերակցությունը խախտվում է բոլոր լեզուներում, այս սկզբունքից շեղվելու աստիճանը կարող է հանդես գալ որպես տիպաբանական բնութագիր (Гак, 2006):

Տառագրական այբբենական համակարգերում օգտագործվող նշանները կարելի է բաժանել մի քանի խմբի.

ա) պարզ տառեր,

բ) անհատական, այսինքն մեկ տառի հետ կապված, տարբերիչ նշաններ,
 գ) ազատ, այսինքն մի քանի տառերի հետ կապված, տարբերիչ նշաններ,
 դ) տարբերիչ տառեր, որոնք չեն արտաբերվում, այլ միայն նշում են մախորդ կամ հաջորդ տառի արտասանությունը կամ անջատական գործառույթ են կատարում,

ե) կցագրեր, այսինքն տառերի միահյուսում,

զ) բարդ տառեր, այսինքն մեկ տառի գործառույթ կատարող մի քանի տառերից բաղկացած տառակապակցություններ:

Պ. Թեմչը և Ռ. Գրիֆիթսը այս խմբի փոխարեն առանձնացնում են կրկնատառություններ (bb, cc և այլն), երկտառություններ (ch, ck, th և այլն), եռատառություններ (air, are, ear և այլն) և քառատառություններ (aire), սակայն դրանց բաղադրիչների քանակը եական չէ, քանի որ դրանց բոլորի գործառույթը նույնն է (Tench, Griffiths, 2007):

Տառագրական նշանների այս տեսակները հետևյալ կերպ են ներկայացված զուգադրվող լեզուներում.

Նշանների տեսակները	Անգլերեն	Հայերեն
ա) պարզ տառ	24	39
բ) անհատական տարբերիչ նշան	` acute accent, op. <i>résumé</i> ' grave accent, op. <i>voilà</i> , cedilla, op. <i>façade</i>	-
գ) ազատ տարբերիչ նշան	-	-
դ) տարբերիչ տառ/տառակապակցություն	բաղաձայնով հաջորդվող <i>l, s</i> , ձայնավորին հաջորդող <i>r, re, wh</i> տառակապակցությանը հաջորդող <i>o, oo</i> <i>k</i> -ից առաջ, <i>ea d, th-hg</i> <i>unwag, w a-hg unwag, -ld, -mb, -nd, - gh</i>	-
ե) կցագիր	æ	-
զ) բարդ տառ (տառակապակցություն)	<i>ch, ck, ng, nk, tch, th, ps, wh, sh, qu, wr,</i> <i>ai/ay, au, oi/oy, ow, ou, eer, air, our, ew</i> և այլն	-

Աղյուսակից երևում է, որ անգլերենի և հայերենի տառագրական համակարգերը զգալիորեն տարբերվում են իրարից. միակ նմանությունն այն է, որ երկու լեզուներում էլ բացակայում են ազատ տարբերիչ նշանները:

Անգլերենը 44 հնչույթ նշելու համար օգտագործում է հիմնականում պարզ և բարդ տառեր: Չնայաց աղյուսակում հիշատակված է տարբերիչ նշանի և կցագրի օգտագործումը անգլերենում, անհրաժեշտ է նշել, որ այդ տառագրական նշանների կիրառումը բավականին սահմանափակ է: Տարբերիչ նշանով տառերը օգտագործվում են առնմանմանը դեռևս չենթարկված օտարալեզու բառերում (հիմնականում ֆրանսերենից և իսպաներենից), սակայն նույնիսկ այդ բառերում տարբերիչ նշանները հաճախակի չեն օգտագործվում: Այսպես, օրինակ, Ջ. Ուելսի արտասանական բառարանում նշված է որոշ օտարալեզու բառերի մի

քանի զուգահեռ օգտագործվող գրություն՝ cafe և cafn, resume, rsumn և resumn, elite և nlite, role և rle. Ինչ վերաբերում է Ջ կցագրի կիրառմանը, ապա այն հիմնականում օգտագործվում է պատմական աղբյուրների հղումների դեպքում կամ հնաոճ բառերում: Բացի այդ, աղյուսակից միանշանակ պարզ է, որ տառագրական անհամաչափությունը ավելի լայն է ներկայացված անգլերենում, քան հայերենում:

Լեզուներում տառի և հնչյունի միջև հարաբերակցությունը կարող է արտահայտվել երեք ասպեկտներով.

1. շարակարգային՝ բառի տառերի քանակը պետք է համապատասխանի հնչյունների քանակին,

2. հարացույցային՝ այբուբենի յուրաքանչյուր տառին պետք է համապատասխանի լեզվի մեկ հնչույթ, և ընդհակառակը, յուրաքանչյուր հնչույթին՝ մեկ տառ.

3. նշանագիտական՝ պետք է առկա լինեն նշանի երկու կողմերը. յուրաքանչյուր տառ պետք է հնչյուն նշանակի, իսկ յուրաքանչյուր արտաբերվող հնչյուն պետք է նշվի գրության մեջ:

Տառի և հնչյունի միջև փոխադարձ-միանշանակ հարաբերակցությունը կարող է խախտվել յուրաքանչյուր դեպքում, հետևաբար, տեսականորեն հնարավոր է տառագրական նշանի անհամաչափության 6 տեսակ, ընդ որում, յուրաքանչյուր դեպքում կամ նշանակիչների քանակը գերազանցում է նշանակյալների քանակին, կամ ընդհակառակը: Տառի (նշանակիչի) և հնչյունի (նշանակյալի) միացությունը կազմում է տառագրական համակարգի միավոր՝ տառույթ:

Տառի (նշանակիչի) և հնչյունի (նշանակյալի) հարաբերակցություն	Վերլուծության պլան		
	շարակարգային (նշանի սահմանների խախտում)	հարացույցային (շեղում նշանի մեկիմաստությունից)	նշանագիտական (նշանի ռբևե կողմի բացակայություն)
S<Z	Անգլ. x= [ks], [gz] Հայ. k= [t], [t̥], k=[t̪t̪], [t̪], n= [o], [v̪] համադրական (պարզ) տառույթ	Անգլ. c=[k], [s], g= [g], [dʒ] Հայ. q= [q], [h̪], q=[p], [k̪] բազմիմաստ տառույթ	Անգլ. հապավումներ Հայ. ա[j]ի, ի[j]ե, ի[j]ու, ե/[j]ի, ե[j]ո, ե[j]ու, ու[j]ի, գաղտնավանկ [ը], հապավումներ զրո տառույթ
S>Z	Անգլ. ck=[k], sh=[ʃ], au=[ɔ:], tch=[tʃ] և այլն Հայ. - վերլուծական (բարդ) տառույթ	Անգլ. c/ k/ck=[k], g/dʒ=[dʒ], և այլն Հայ. q/ʃ=[h̪], q/p=[p], և այլն հոմանիշ տառույթներ	Անգլ. h, l, n, k, b, w որոշ դեպքերում, -gh, e բառավերջում Հայ. h բառավերջում, չ[չ]-ից հետո համը տառույթ

Համադրական տառույթները հայերենում ավելի լայն են ներկայացված, և դրանք միաժամանակ բազմիմաստ են: Անգլերենում կա միայն մեկ համադրական տառույթ x, որը նշում է [ks], [gz] հնչյունների կապակցությունները, որոնք կարող են նշվել նաև պարզ տառույթներով, օրինակ՝ tocsin, zigzag: Վերլուծա-

կան տառայությունները բնորոշ են միայն անգլերենին: Անգլերենում օգտագործվում են ավելի քան 50 կայուն տառակապակցություններ, որոնցից որոշ մասը որոշակի հնչույթներ նշելու հիմնական միջոց է, օրինակ՝ sh, th, ch, er և այլն, իսկ մյուսները՝ օգտագործվում են որպես այլ տառայությունների հոմանիշ, օրինակ՝ ai/ay, au, wr և այլն: Այսպիսով, հայերենի համադրական և անգլերենի վերլուծական բնույթը արտահայտվում է և տառագրական մակարդակում:

Բազմիմաստությունը բնորոշ է երկու լեզուների տառագրական համակարգերին, սակայն, ի տարբերություն հայերենի, որտեղ բազմիմաստության երևույթը բացակայում է ձայնավոր տառայությունների ենթահամակարգում, անգլերենում առկա են բազմաթիվ բազմիմաստ՝ ինչպես բաղաձայն, այնպես էլ ձայնավոր տառայություններ, օրինակ՝ ch, th, wh, x, c, g, a, e, i, o, y և այլն: Հոմանիշ տառայությունները հանդիպում են ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում, սակայն անգլերենում տառայությունների հոմանիշությունը ավելի տարածված է, քան հայերենում, օրինակ՝ c, k, ck, cc, qu = [k], : o, oa, oe, ow = [oʊ]:

Ջրո տառայությունները երկու լեզուներում էլ վերաբերվում են հապավումներին, սակայն, ի տարբերություն անգլերենի, հայերենում զրո տառայությունները առաջանում են գաղտնավանկ ը-ի և ձայնավորների եի, էի, եո, եու, ուի տառակապակցությունների դեպքում (Սուքիասյան, 1999): Համը տառայությունները հանդիպում են և՛ անգլերենում, և՛ հայերենում, սակայն ավելի բնորոշ են անգլերենին՝ նախ և առաջ, համը e տառայության հանդիպման բազմաթիվ դեպքերի պատճառով: Բացի այդ, մի շարք բաղաձայն տառայություններ որոշ դեպքերում նույնպես համապատասխանում են զրո հնչույթին, օրինակ՝ vehicle, comb, half և այլն, մինչդեռ հայերենում համը են լինում միայն h տառայությամբ՝ բառավերջում (աշխարհ, ճանապարհ) և j տառայությամբ՝ [ջ] հնչյունից հետո (հնչյուն):

Անգլերենում տառագրական անհամաչափությունը ավելանում է նաև այն պատճառով, որ, ի տարբերություն հայերենի, որոշ հնչույթները նշելու համար գոյություն չունի համապատասխան պարզ տառայություն, օրինակ՝ [ʒ], [θ], [ʀ], [ɜ:] և այլն: Բացի այդ, անգլերենում առկա են որոշ ավելորդ տառեր, որոնց փոխարեն հնարավոր կլիներ օգտագործել այլ տառեր կամ տառակապակցություններ, օրինակ՝ [k] հնչույթը հնարավոր է նշել c տառով կամ ck տառակապակցությամբ, և այդ դեպքում k տառը ավելորդ է դառնում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տառագրական անհամապատասխանության երևույթը ավելի լայն է տարածված անգլերենում, քան հայերենում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Tench P., Griffiths R. V.* Spelling in the Mind: phonemicgraphemic correspondence hypotheses.// Proceedings of the BAAL Conference 2007
2. *Гак В. Г.* Сравнительная типология французского и русского языков. М., 2006
3. *Սուքիասյան Ա. Մ.* Ժամանակակից հայոց լեզու: Երևան, 1999

ТИПЫ ГРАФИЧЕСКОЙ АССИМЕТРИИ В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

С. М. Гюрджаянц

Статья посвящена сопоставлению графических систем английского и армянского языков. В частности анализируются типы графической ассиметрии в сопоставляемых языках. В результате сопоставления выявлены общие и специфические типы графической ассиметрии и сделан вывод о том, что явление графической ассиметрии гораздо шире представлено в английском языке, чем в армянском.

TYPES OF THE GRAPHIC ASYMMETRY IN ENGLISH AND ARMENIAN

S. M. Gyurjayants

The article deals with the comparison of graphical systems of English and Armenian, in particular to analysing types of graphical asymmetry in the languages under comparison. In the result, general and specific types of graphic asymmetry are singled out in the two languages. The conclusion is that the phenomenon analysed is much wider represented in English than in Armenian.

FOREIGN LANGUAGE INFLUENCE ON HUMAN THOUGHT AND PSYCHOLOGY

S. A. KHACHATRYAN

GSU lecturer

*You live a new life for every new language you speak.
If you know only one language, you live only once.
(Czech proverb)*

There is a very widespread belief that difficulties between nations are caused by linguistic diversity and that if all nations talk the same language it would be easy to reach agreement. This belief is expressed in the legend of the Tower of Babel, according to which all mankind did talk one language from the time of Adam until Nimrod presumed to build a tower to reach Heaven, and to impede the completion of the tower, the Lord caused a tumult among them by producing diverse languages amongst them, and causing that through the multitude of those languages, they should be unable to understand one another. Thus, linguistic diversity was created.

The word “*Language*” comes from the Latin word “*lingua*” meaning “*tongue*”. Language is human speech, either spoken or written. Language allows people to talk to each other and express their thoughts and ideas. It constantly reflects and creates the way we perceive reality. Without language there would be no science, religion, art, literature, philosophy, government, etc. Scholars have determined that there are about 3000 languages